ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

22 ապրիլի 2022թ. թիվ 135-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-ԻՆ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի մոտ 2022 թվականի ապրիլի 14-ին, ժամը 15:00-ին 2022 թվականի ապրիլի 30-ին նախատեսված համապետական շաբաթօրյակի կազմակերպչական աշխատանքների քննարկման նպատակով կայացած նիստի արձանագրության պահանջները

Որոշում եմ՝

1. Մարզում 2022թ. ապրիլի 30-ին անցկացնել համապետական շաբաթօրյակ:
2. Մարզպետի տեղակալ Նարեկ Ղուշչյանին՝
-ապահովել գործադիր մարմինների մարզային կառույցների հետ ակտիվ համագործակցությունը՝ շաբաթօրյակն արդյունավետ կազմակերպելու նպատակով:
3. Մարզպետի տեղակալ Արթուր Հովակիմյանին՝
-ապահովել մարզի տարածքում զորամասերի անձնակազմերի և զինծառայողների առավելագույն ներգրավվածությունը զորամասերին հարակից տարածքների մաքրման աշխատանքներում՝ աջակցություն ցուցաբերելով համապատասխան համայնքներին:
4. Մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Աղաբեկ Գալստյանին՝
-ապահովել քաղաքացիների, համայնքներում գործող բոլոր համայնքային, մարզային կազմակերպությունների, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների ակտիվ մասնակցությունը շաբաթօրյակի աշխատանքներին:
5. Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վաղարշակ Սուքոյանին՝
-ապահովել անտառտնտեսությունների աշխատակիցների և մարզի հատուկ պահպանվող տարածքների կառույցների ներգրավվածությունը մաքրման աշխատանքներին:
6. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մերուժան Հարությունյանին՝
-ապահովել մարզի կրթական համակարգի բոլոր կառույցների աշխատակիցների և սովորողների ակտիվ մասնակցությունը շաբաթօրյակի աշխատանքներին:

7. Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ռուբեն Տիգրանյանին՝

-ապահովել մարզի առողջապահական հիմնարկների և այլ կառույցների աշխատակիցների ակտիվ մասնակցությունը շաբաթօրյակի աշխատանքներին:

8. Մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի պարտականությունները կատարող Միսակ Մելքումյանին՝

-ապահովել մարզի շինարարական ընկերությունների, ջրային համակարգերի և դրանց հարակից տարածքների առավելագույն ներգրավվածությունը մաքրման և բարեկարգման աշխատանքներում՝ նախատեսելով համապատասխան ընկերությունների տեխնիկական աջակցությունը համայնքներին:

-ապահովել միջպետական և միջհամայնքային ավտոճանապարհների եզրերի ու հարակից տարածքների, այդ թվում սննդի և այլ ծառայություններ մատուցող օբյեկտներին հարող տարածքների մաքրության կազմակերպումը՝ նախատեսելով միջպետական և միջհամայնքային ավտոճանապարհների շահագործումն ու պահպանումն իրականացնող ընկերությունների տեխնիկական միջոցների հնարավորինս ներգրավումով:

9. Մարզպետարանի ծրագրերի և վերլուծությունների բաժնի վարիչ Գուրգեն Հարությունյանին՝

- ապահովել մարզի տարածքում տնտեսական գործունեություն ծավալող մասնավոր ընկերությունների մասնակցությունը շաբաթօրյակի աշխատանքներին:

10. Մարզպետարանի լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ Վալեր Օրդյանին՝

-ապահովել շաբաթօրյակի աշխատանքների ողջ ընթացքի լուսաբանումը:

11. Առաջարկությամբ.

1) ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Տավուշի մարզային փրկարար ծառայության պետ, արտակարգ իրավիճակների գնդապետ Վահան Փիրումյանին՝

-ապահովել հատուկ պատրաստվածություն ունեցող անձնակազմի աջակցությունը հատկապես դժվարամատչելի տարածքների և օբյեկտների մաքրման աշխատանքներում:

2) ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Տավուշի տարածքային բաժնի պետ Դավիթ Խառատյանին՝

-ուժեղացնել մարզի հատուկ պահպանվող տարածքների մաքրության հսկողությունը:

3) ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության պետ, ոստիկանության գնդապետ Սերգո Ավետիսյանին՝

-հաշվի առնելով համապետական շաբաթօրյակի աշխատանքների իրականացման տարածքներում ակնկալվող հասարակական մեծ ներգրավվածությունը՝ ապահովել հասարակական կարգը, մարզի տարածքում միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների երկայնքով ճանապարհային երթևեկության կանոնների պահպանությունը և անվտանգությունը:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

22.04.2022

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ